Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 2000թ գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին

1.Ինստիտուտում գործում են պետբյուջեից ֆինանսավորվող հետևյալ թեմատիկ խմբերը

Հին Հայստանի պետականության պատմություն /ղեկավար՝ պ. գ. դ. պրոֆ. Ս. Կրկյաշարյան/

Հայոց պետկանությունը և Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետությունը վաղ միջնադարում /ղեկավար՝ պ. գ. դ. Է. Դանիելյան/

Հայաստանը միջին դարերում /ղեկավար՝ ակադեմիկոս Հ. Բարթիկյան/

Արցախը և հայ-ռուսական հարաբերությունները /ղեկավար՝ ակադ. Վ. Բարխուդարյան/

Հայ պարբերական մամուլի պատմություն /ղեկ. պ. գ. դ. Ա. Խառատյան/

Հայկական հարցը և Ռուսաստանը XIX դ. վերջին և XX դ. սկզբին /ղեկ.՝ պ. գ. դ., պրոֆ. Ս. Ստեփանյան/

Հայ ազգային-ազատագրական շարժումները 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին /ղեկ.՝ պ. գ. դ., պրոֆ. Ա. Համբարյան/

Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին /ղեկ.՝ պ. գ. թ. Ա. Մելքոնյան/

Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն /19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ /ղեկ.՝ պ. գ. թ. Դ. Մուրադյան/

Հայ գաղթավայրերի պատմություն /ղեկ.՝ ակադեմիկոս Վ. Միքայելյան/

Կիլիկիահայության պատմության հիմնահարցեր /XV-XX դդ/ /ղեկ.՝ պ. գ. թ. Ռ. Գասպարյան/

Հայաստանի առաջին Հանրապետության պատմություն/ներքին քաղաքկանություն/ /ղեկ.՝ ակադեմիկոս Հ. Ավետիսյան/

Խորհրդային Հայաստանի պատմության հիմնահարցեր /ղեկ.՝ պ. գ. դ., պրոֆ. Վ. Ղազախեցյան/

Հայ ժողովրդի մասնակցությունը 2-րդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմին /ղեկ.՝ պ. գ. դ. Կ. Հարությունյան/

Արևելքի երկրների հայ համայնքների պատմություն /1915-1995թթ./ /ղեկ.՝ պ. գ. դ. Ջ. Ղասաբյան/

Համասփյուռքյան կազմակերպություններ /ղեկ.՝ բ. գ. դ. Կ. Դալլաքյան/

Հայաստանի երրորդ հանրապետությունը 10 տարում /1991-2000թթ./ /ղեկ.՝ պ. գ. դ. Գ. Գեղամյան

Հայաստանը 1-ին համաշխարհային պատերազմի տարիներին թեմայի պատմագրությունը /ղեկ՝ ակադեմիկոս Հ. Սիմոնյան/

Հայաստանի վերամիավորման և հայկական պետության վերստեղծման հարցը և Մեծ տերությունների քաղաքականությունը /19-րդ դ. վերջին քառորդ- 1918թ./, /ղեկ.՝ ակադեմիկոս Գ. Գալոյան/

Հայաստանի ցենզուրայի պատմություն /ղեկ.՝ Գ. Մարտիրոսյան/

2000 թ. ինստիտուտի ձեռք բերած կարևորագույն արդյունքներն են բոլոր թեմաներով կատարված մեծ աշխատանքները, հրատարակված բազմաթիվ գիտական, գիտակրթական ուսումնասիրությունները, որոնք ունեն հրատապ արդիական նշանակություն:

Մեծ աշխատանք է կատարվել ինստիտուտի «Հին Հայաստանի պատմության» բաժնում /ղեկ.՝ պ. գ. դ. Ս. Կրկյաշարյան/: Լույս է տեսել վերջինիս «Կյուրոպեդիա» աշխատությունը /թարգ. հունարենից, հեղինակի ծանոթագրություններով/: Լույս է տեսել ինստիտուտի «Հայ Առաքելական եկեղեցու պատմություն» բաժնի ղեկավար պ. գ. դ. Է. Դանիելյանի «Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ Առաքելական եկեղեցին /VI-VIIդդ./» ուշագրավ մենագրությունը: Է. Դանիելյանի խմբագրությամբ հրատարակվել է «Հայոց պատմություն» ուսումնական ձեռնարկն արևմտահայերեն լեզվով՝ սփյուռքի աշակերտների և ուսուցիչների համար:

Ինստիտուտի «Ազգային-ազատագրական շարժումները 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբին» /ղեկ.՝ պ. գ. դ. Ա. Համբարյան/ և «Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն /19-րդ դ. վերջ- 20-րդ դ. սկիզբ/» / ղեկ.՝ պ. գ. թ. Դ. Մուրադյան/ բաժինները գնահատելի աշխատանք են կատարել թեմաների ուսումնասիրման և լուսաբանման ուղղությամբ: Լույս են տեսել պ. գ. դ. Է. Կոստանդյանի «Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեություն» և Գ. Խուդինյանի «Հ. Յ. Դաշնակցության ծնունդը» ուշագրավ և արժեքավոր մենագրությունները:

Լույս են տեսել ինստիտուտի «Հայ գաղթավայրերի պատմություն» բաժնի ղեկավար ակադ. Վ. Միքայելյանի «Ղրիմահայ գաղութը Արևելք-Արևմուտք հարաբերությունների ոլորտում /XIII-XVIIIդդ./» և բաժնի գիտաշխատող պ. գ. թ. Ք. Ավագյանի «ԱՄՆ-ի հայ գաղութի պատմությունը /սկզբնավորումից մինչև 1924թ.» բովանդակալից աշխատությունները, որոնք նույնպես մեծ ներդրում են հայ պատմագրության մեջ:

Ինստիտուտի գիտաշխատողների կարևորագույն ձեռքբերումներից է «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. /Քաղաքական պատմ./» փաստաթղթերի և նյութերի

ժողովածուի հրատարակումը /պատասխանատու խմբ. Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան/: Ժողովածուում զետեղված են հիմնականում նորահայտ արխիվային փաստաթղթեր, որոնք լույս են սփռում Հայաստանի 1-ին Հանրապետության պատմության մի շարք կարևոր իրադարձությունների վրա:

2000թ. ինստիտուտի նվաճումներից է նաև ակադ. Հ. Ավետիսյանի խմբագրությամբ հրատարակված «Գրիգոր Հարությունյան. կյանքը և գործունեությունը» պատմագիտական մեծ արժեք ներկայացնող աշխատությունը: Նրանում արխիվային հարուստ հիմքի, անվանի գիտնականների, քաղաքական և մշակութային գործիչների հիշողությունների ու հոդվածների հիման վրա բացահայտվում է Գ. Հարությունյանի վառ անհատականությունը, ցույց է տրվում նրա ազգանվեր գործունեությունը:

ՊԻ անցկացրած հանրապետական և միջազգային կոնֆերանսները,
և այլ գիտական միջոցառումները

N	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում արտ. երկրներից
1.	Գիտաժողով, նվիրված զորավար Անդրանիկին	պատմ. ինստիտուտ 18. II. 2000թ.	65	-
2.	Միջազգային գիտաժողով. 21-րդ դարն առանց ցեղասպանությունների	ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճ, 18-21. IV. 2000թ. Պատմության ինստիտուտ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Մյունխենի հայկական հարցերի հաստատություն	120	10
3.	Գիտաժողով, նվիրված Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 55-ամյակին	պատմ. ինստիտուտ 6. V. 2000թ.	70	-
4.	Երիտասարդական գիտաշխատողների 27-րդ գիտական նստաշրջան	պատմ. ինստիտուտ 2-3. XI. 2000թ.	65	-
5.	Գիտաժողով, նվիրված Գրիգոր Հարությունյանի 100-ամյակին	ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճ 10. XI. 2000թ. Պատմության ինստիտուտ	150	15

Ինստիտուտի գիտաշխատողների կողմից 2000թ. հրատարակված աշխատությունները

1. Ս. Կրկյաշարյան, «Կյուրոպեդիա», Երևան
2. Է. Դանիելյան, Հայոց պատմություն, ուսումնական ձեռնարկ /արևմտահայերեն/, Երևան, «Անկյունաքար»
3. Մ. Կարապետյան- Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում /1914-1917թթ./, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
4. Է. Լ. Դանիելյան- Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ առաքելական եկեղեցին /VI-VII դարեր/, Երևան, «Անկյունաքար»
5. Է. Կոստանդյան-Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, «Զանգակ»
6. Ք. Ավագյան- Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը /սկզբնավորումից մինչև 1924թ./, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
7. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. /քաղաքական պատմություն/ փաստաթղթերի և նյութերի ժողովածու, պատ. խմբ. Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
8. Գ. Խուդինյան, Հ. Յ. Դաշնակցության ծնունդը, Երևան, «Արտագերս»
9. Ս. Շիրինյան, Ախալքալաքցիներ, Երևան, «Հայք»
10. Հ. Ավետիսյան, Ա. Ավետիսյան, Ա. Վիրաբյան, Կ. Հարությունյան. Գրիգոր Հարությունյան. կյանքը և գործունեությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
11. Վ. Միքայելյան, Ղրիմահայ գաղութը Արևելք- Արևմուտք հարաբերությունների ոլորտում /13-18-րդ դարեր/ Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»

Տվյալներ ասպիրանտուրայի և կադրերի մասին

Ասպիրանտների քանակը /այդ թվում կանայք/ առ 1. 01. 2001թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել /այդ թվում կանայք/	
ա/կ	ա/չկ	ա/կ	ա/չկ
2	3	4	5
4/1	3/3	1/-/	-

Ինստիտուտի աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ

Աշխատողների ընդհանուր թիվը /այդ թվում կանայք/	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը /այդ թվում կանայք/	ԳԱԱ ակադեմիկոսներ /այդ թվում կանայք/	Գիտության դոկտորներ /այդ թվում կանայք/	Գիտության թեկնածուներ /այդ թվում կանայք/
126/45/	101/28/	6/-/	35/2/	49/14/

Տեղեկություններ հաշվետու տարում գիտնականների պատվավոր կոչումների և պարգևատրումների մասին:

Հաշվետու տարում պատմության ինստիտուտը և ինստիտուտի մի շարք գիտնականներ /Հ. Ավետիսյան, Ա. Մելքոնյան, Վ. Միքայելյան, Ստ. Ստեփանյան, Գ. Մախմուրյան/ արժանացել են ՀՀ ԳԱԱ-ի պատվոգրերի՝ Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, սփյուռքահայության պատմության ուսումնասիրության բնագավառում գիտական հետազոտությունների համար:

Մասնագիտացված գիտական խորհուրդների աշխատանքները

ինստիտուտ	Մասնագիտությունը	Պաշտպանությանությունների թիվը			
		Ինստիտուտի աշխատակիցների կողմից		Ինստիտուտից դուրս հայցողների կողմից	
		դոկտ.	թեկնած.	դոկտ.	թեկնած.
Պատմության ինստիտուտ	Հայոց պատմություն և պատմագիտություն	-	1	4	4

Պատմության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ